

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1364-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

9 հոկտեմբերի 2014 թ.
N 1102-Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 1364-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 2-րդ կետը «համակարգչային եղանակով» բառերից հետո լրացնել «կամ հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով էլեկտրոնային» բառերով.

2) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հաշվարկային փաստաթղթեր (բացառությամբ ՀՂՄ կտրոնի) կարող են դուրս գրվել տրանսպորտային միջոցներում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով:».

3) 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տրանսպորտային միջոցներում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրվելու դեպքում ՀՂՄ-ն գործարկելիս «Հարկային հաշիվներ» և «Հաշվարկային փաստաթուղթ» ձևերից ընտրվում է «Հաշվարկային փաստաթուղթ» ձևը:».

4) 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի թղթային՝ հսկիչ-դրամարկղային մեքենայի ժապավենի վրա տպագրված տարբերակը չի պահպանում հաշվարկային փաստաթղթի ձևը, սակայն պետք է պարունակի հաշվարկային փաստաթղթում լրացման ենթակա տվյալներն ու վավերապայմանները:».

5) 9-րդ կետը «ծրագիր» բառից հետո լրացնել «կամ ՀՂՄ-ի հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման ծրագիր» բառերով, իսկ «ծրագրից» բառը փոխարինել «ծրագրերից» բառով.

6) 11-րդ կետը «փաստաթղթերը» բառից հետո լրացնել «, ՀՂՄ-ով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերը» բառերով.

7) 13-րդ կետը «տարբերակի» բառից հետո լրացնել «կամ ՀՂՄ կտրոնի դարձերեսի» բառերով.

8) 16-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«ՀՂՄ-ի միջոցով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելիս ինքնաշխատ լրացվում և ՀՂՄ-ի ժապավենի վրա արտացոլվում են սույն կետում նշված տվյալները: ՀՂՄ-ի միջոցով հաշվարկային փաստաթուղթ դուրս է գրվում, եթե լրացվել են առնվազն մեկ ապրանքի մատակարարման մասին տվյալներ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Ա. Գևորգյան

13 հոկտեմբերի 2014 թ.
Երևան